Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/44019/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 դեկտեմբերի 2023 թվական **քաղաք Երևան**

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Հ. Ջալալյանի (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով «Կաուպերֆուդ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության՝ գնահատող հանձնաժողովի նիստի 2023 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2 արձանագրությունը՝ հայցվորի ներկայացրած հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, և քննարկելով այն վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

18.12.2023 թվականին «Կաուպերֆուդ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության՝ խնդրելով անվավեր ճանաչել «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/34» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 2023 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2 արձանագրությունը՝ հայցվորի ներկայացրած հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով և որպես անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել արձանագրությունը՝ հայցվորի հաղթած չափաբաժիններով այլ անձանց ընտրված մասնակից ճանաչելու կամ այդ չափաբաժիններով Ընթացակարգը չկայացած ճանաչելու որոշման մասով և հայցվորի հաղթած չափաբաժիններով հայցվորին ճանաչել ընտրված մասնակից, ինչպես նաև պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձել նախապես վճարված պետական տուրքի և փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները:

Դատարանի 22.12.2023 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցվորի ներկայացուցիչը 26.12.2023 թվականին հայցադիմումը կրկին ներկայացրել է Դատարան, որը Դատարանում մուտքագրվել է 26.12.2023 թվականին, դատավորի աշխատակազմին հանձնվել՝ 27.12.2023 թվականին:

Կրկին ներկայացված հայցադիմումով հայցվորի ներկայացուցիչը խնդրել է անվավեր ճանաչել «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/34» ծածկագրով գնման ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի նիստի 2023 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2 արձանագրությունը՝ հայցվորի ներկայացրած հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով և որպես անվավերության հետևանք՝ անվավեր ճանաչել արձանագրությունը՝ հայցվորի հաղթած չափաբաժիններով այլ անձանց ընտրված մասնակից ճանաչելու կամ այդ չափաբաժիններով Ընթացակարգը չկայացած ճանաչելու որոշման մասով և հայցվորի հաղթած չափաբաժիններով հայցվորին ճանաչել ընտրված մասնակից, ինչպես նաև պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձել նախապես վճարված պետական տուրքի և փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները:

Դատարանն, ուսումնասիրելով կրկին ներկայացված հայցադիմումը, արձանագրում է, որ այն ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան, հետևաբար, Դատարանը գտնում է, որ հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-125-րդ, 199-200-րդ, 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

«Կաուպերֆուդ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության՝ գնահատող հանձնաժողովի նիստի 2023 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2 արձանագրությունը՝ հայցվորի ներկայացրած հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

Հայցադիմումը Դատարանում ներկայացված համարել այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 18.12.2023 թվականը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ.ՋԱԼԱԼՅԱՆ**